

2019 թվական

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Հաշվերու ժամանակահատված՝
01.01.2019թ. - 30.12.2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	- 2 -
1. Վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծությունը..	- 3 -
2. Խորհրդատվական գործունեությունը, տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ տրվող հարցերի վերհանումը և այն իրավական ակտերը, որոնք տալիս են դրանց հստակ պատասխանները.	- 26 -
3. Կանխարգելիչ գործողությունները և այն ռիսկերը, որոնց վերհանմանն են ուղղված, և որոնք կանխել են դրանք.....	- 31 -
4. Ստուգումներ, դրանց քանակը, բնութագրերը, տևողությունը և անցկացված ստուգումների արդյունքները.	- 34 -
6. Օրենսդրության մեջ փոփոխությունների կատարման առաջարկները՝ օրենսդրական բացերը լրացնելու, ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով.	- 38 -
7. Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ, բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումների մասին.	- 41 -

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) 2019 թվականի գործունեության տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) կազմման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N733-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

Տեսչական մարմինն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, այդ թվում՝ կիրառում պատասխանատվության միջոցներ բնապահպանության ու ընդերքի ոլորտներում, ձեռնարկում միջոցներ վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ: Ուղղություններն են՝

- ✓ մթնոլորտային օդի պահպանություն
- ✓ ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն
- ✓ հողերի օգտագործում և պահպանություն
- ✓ ընդերքօգտագործում և ընդերքի պահպանություն
- ✓ կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն
- ✓ վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ
- ✓ պետական փորձաքննություն
- ✓ բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարներ
- ✓ վիճակագրական հաշվետվություններ

1. Վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծությունը

Տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 733-Լ որոշման հավելվածի 10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում ապահովում է ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

Տեսչական մարմնի գործունեության սկզբունքներն ապահովելու, ինչպես նաև բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունն իրականացնելու նպատակով հիմք են հանդիսացել Տեսչական մարմնի կողմից 2018-2019թթ ընթացքում իրականացված վերահսկողության արդյունքները՝ պայմանավորված առավել ռիսկային ուղղությունների բացահայտմամբ, որոնցում առավել հաճախ են արձանագրվել իրավախախտումներ:


Վերահսկողական աշխատանքների ամփոփ ցուցանիշներ 2018-2019թթ.

❖ Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում իրականացված վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթների արդյունքում արձանագրվել է թվով 1863 իրավախախտում, իսկ 2018 թվականի ընթացքում՝ թվով 1089 իրավախախտում:

Աղյուսակ 1-ում ներկայացված են 2018-2019թթ. հայտնաբերված իրավախախտումների թվային տվյալները, համաձայն որոնց 2019 թվականի ընթացքում արձանագրվել է իրավախախտումների ընդհանուր թվի 71% աճ՝ 2018 թվականի համեմատությամբ: Ըստ վերահսկողական ուղղությունների արձանագրված իրավախախտումների համեմատական պատկերը ներկայացված է Գծապատկեր 1-ում, համաձայն որի որոշ ուղղություններով արձանագրվել է աճ, մեկով՝ նվազում: Մասնավորապես՝

- ✓ բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն ուղղությամբ՝ 46%
- ✓ կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն ուղղությամբ՝ 281 %
- ✓ մթնոլորտային օդի պահպանություն ուղղությամբ՝ -16,9 %
- ✓ ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն ուղղությամբ՝ 172 %
- ✓ վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ ուղղությամբ՝ 125%
- ✓ հողերի օգտագործում և պահպանություն ուղղությամբ՝ 47,2 %
- ✓ ընդերքօգտագործում և ընդերքի պահպանություն ուղղությամբ՝ 16,6 %
- ✓ վիճակագրական հաշվետվություններ ուղղությամբ՝ 173,4%
- ✓ պետական փորձաքննություն ուղղությամբ՝ 66,6 %

<i>Աղյուսակ 1</i>			
Տեսչական մարմնի կողմից հայտնաբերված իրավախախտումների թվի 2018-2019թթ. համեմատականը՝ ըստ վերահսկողական ուղղությունների			
Հ/Հ	Ուղղությունները	2018 թվական	2019 թվական
1	2	3	4
1	Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն	767	1121
2	Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն	59	225
3	Մթնոլորտային օդի պահպանություն	65	54
4	Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	36	98
5	Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ	4	9
6	Հողերի օգտագործում և պահպանություն	36	57
7	Ընդերքօգտագործում և պահպանություն	18	21
8	Վիճակագրական հաշվետվություններ	98	268
9	Պետական փորձաքննություն	6	10
ԸՆԴԱՄԵՆԸ		1089	1863



❖ **Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրված իրավախախտումների հիմքով հարուցվել է 1228 վարչական վարույթ, իսկ 2018 թվականի ընթացքում՝ 1081 վարչական վարույթ դիմում-բողոքների, Տեսչական մարմնի նախաձեռնությամբ, ահազանգերի, Շրջակա միջավայրի նախարարությունից, ՀՀ իրավապահ մարմիններից, ՀՀ պետական այլ մարմիններից ստացված գրությունների և այլ հիմքերով:**


Աղյուսակ 2-ում ներկայացված են 2018-2019թթ. թվային տվյալները, համաձայն որոնց՝ 2019 թվականի ընթացքում հարուցվել է 13,6 %-ով ավել վարչական գործի վարույթ՝ 2018 թվականի համեմատությամբ: Տեսչական մարմնի ստորաբաժանումների կողմից հարուցված վարչական գործերի վարույթների քանակի համեմատական պատկերը ներկայացված է Գծապատկեր 2-ում:

**Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթների քանակի
2018-2019թթ. համեմատականը**

Հ/Հ	Ստորաբաժանման անվանումը	2018 թվական	2019 թվական
1	2	3	4
1	Երևանի տարածքային բաժին	223	247
2	Արագածոտնի տարածքային բաժին	78	95
3	Արարատի տարածքային բաժին	46	100
4	Արմավիրի տարածքային բաժին	35	30
5	Կոտայքի տարածքային բաժին	31	84
6	Գեղարքունիքի տարածքային բաժին	80	124
7	Տավուշի տարածքային բաժին	292	259
8	Լոռու տարածքային բաժին	128	134
9	Շիրակի տարածքային բաժին	52	40
10	Վայոց ձորի տարածքային բաժին	37	13
11	Սյունիքի տարածքային բաժին	21	48
12	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն	11	20
13	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն	29	14
14	Ընդերքի վերահսկողության վարչություն	18	20
ԸՆԴԱՄԵՆԸ		1081	1228

Գծապարկեր 2

Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթների քանակի
2018-2019թթ. համեմատականը




❖ **Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ընթացքում հարուցված վարչական գործերի վարույթների արդյունքում վարչական տույժի են ենթարկվել 914 անձ, իսկ 2018 թվականի ընթացքում՝ 774 անձ:**

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2018-2019թթ. վարչական տույժի ենթարկված անձանց թվաքանակը, համաձայն որի՝ 2019 թվականի ընթացքում վարչական տույժի ենթարկված անձանց թիվը 18,1 %-ով աճել է՝ 2018 թվականի համեմատությամբ: Տեսչական մարմնի ստորաբաժանումների կողմից հարուցված վարչական վարույթների արդյունքում վարչական տույժի ենթարկված անձանց թվաքանակի համեմատական պատկերը ներկայացված է Գծապատկեր 3-ում:

<i>Աղյուսակ 3</i>			
Տեսչական մարմնի կողմից վարչական տույժի ենթարկված անձանց թվաքանակն՝ ըստ վերահսկողական ուղղությունների			
Հ/Հ	<i>Ուղղությունները</i>	<i>2018 թվական</i>	<i>2019 թվական</i>
1	Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն	504	427
2	Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն	32	37
3	Մթնոլորտային օդի պահպանություն	59	48
4	Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	35	85
5	Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ	4	7
6	Հողերի օգտագործում և պահպանություն	20	29
7	Ընդերքօգտագործում և պահպանություն	17	16
8	Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում	97	255
9	Պետական փորձաքննություն	6	10
ԸՆԴԱՄԵՆԸ		774	914

Տեսչական մարմնի կողմից վարչական տույժի ենթարկված անձանց թվաքանակն՝ ըստ վերահսկողական ուղղությունների



❖ **Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ընթացքում հարուցված վարչական գործերի վարույթների արդյունքում կիրառված վարչական տուգանքի չափը կազմել է 88,160,000 ՀՀ դրամ, իսկ 2018 թվականի ընթացքում՝ 70,100,000 ՀՀ դրամ:**


Աղյուսակ 4-ում ներկայացված են 2018-2019թթ. Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տուգանքների չափը, համաձայն որոնց՝ 2019 թվականի ընթացքում կիրառված վարչական տուգանքի չափը 25,7 %-ով ավել է 2018 թվականի համեմատությամբ: Տեսչական մարմնի վերահսկողական ուղղություններով կիրառված վարչական տուգանքների համեմատական պատկերը ներկայացված է Գծապատկեր 4-ում:

Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տուգանքի չափը՝ ըստ վերահսկողական ուղղությունների

«Ձ դրամ»

Հ/Հ	Ուղղությունները	2018 թվական	2019 թվական
1	Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն	44,340,000	41,330,000
2	Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն	3,040,000	3,170,000
3	Մթնոլորտային օդի պահպանություն	4,400,000	3,850,000
4	Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	7,450,000	18,350,000
5	Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ	200,000	530,000
6	Հողերի օգտագործում և պահպանություն	1,540,000	2,310,000
7	Ընդերքօգտագործում և պահպանություն	1,650,000	1,150,000
8	Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում	6,880,000	16,620,000
9	Պետական փորձաքննություն	600,000	850,000
ԸՆԴԱՄԵՆԸ		70,100,000	88,160,000

Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տուգանքի չափը՝ ըստ վերահսկողական ուղղությունների




❖ **Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ընթացքում վերահսկողական աշխատանքների արդյունքում իրականացվել է 1369 վնասի հաշվարկ և հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված 2,654,777,075 ՀՀ դրամի չափով վնաս, իսկ 2018 թվականի ընթացքում՝ իրականացվել է 826 վնասի հաշվարկ և հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված 1,618,903,640 ՀՀ դրամի չափով վնաս:**

Աղյուսակ 5-ում ներկայացված են 2018-2019թթ. Տեսչական մարմնի կողմից իրականացված հաշվարկների թիվը՝ համաձայն որի՝ 2019 թվականի ընթացքում իրականացված վնասի հասշվարկների քանակը 65,7 %-ով ավել է՝ 2018 թվականի համեմատությամբ:

<i>Աղյուսակ 5</i>			
Տեսչական մարմնի կողմից հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկի քանակն՝ ըստ վերահսկողական ուղղությունների			
Հ/Հ	Ուղղությունները	2018 թվական	2019 թվական
1	Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն	722	1,117
2	Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն	47	176
3	Մթնոլորտային օդի պահպանություն	28	18
4	Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	5	15
5	Հողերի օգտագործում և պահպանություն	24	43
ԸՆԴԱՄԵՆԸ		826	1,369

Տեսչական մարմնի կողմից իրականացված շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկների թվի համեմատական պատկերը՝ ըստ վերահսկողական ուղղությունների, ներկայացված է Գծապատկեր 5-ում:



Աղյուսակ 6-ում ներկայացված են 2018-2019թթ. Տեսչական մարմնի վերահսկողական ուղղություններով հաշվարկված շրջակա միջավայրին հասցված վնասի չափը՝ համաձայն որի, 2019 թվականի ընթացքում հաշվարկված վնասը 64 %-ով ավել է՝ 2018 թվականի համեմատությամբ:

Տեսչական մարմնի կողմից իրականացված շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկների թվի համեմատական պատկերը՝ ըստ վերահսկողական ուղղությունների, ներկայացված է Գծապատկեր 6-ում:


Տեսչական մարմնի կողմից հաշվարկված շրջակա միջավայրին հասցված վնասի չափը՝ ըստ վերահսկողական ուղղությունների

ՀՀ դրամ

Հ/Հ	Ուղղությունները	2018 թվական	2019 թվական
1	Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն	1,071,368,140	1,451,276,420
2	Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն	11,924,500	19,176,384
3	Մթնոլորտային օդի պահպանություն	500,625,330	414,407,196
4	Զրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	6,200,320	659,987,776
5	Հողերի օգտագործում և պահպանություն	28,785,350	109,929,299
ԸՆԴԱՄԵՆԸ		1,618,903,640	2,654,777,075

Գծապարկեր 6

Տեսչական մարմնի կողմից հաշվարկված շրջակա միջավայրին հասցված վնասի չափը՝ ըստ վերահսկողական ուղղությունների



❖ *Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում իրավապահ մարմիններին ուղարկվել է 820 նյութ՝ համաձայն որի շրջակա միջավայրին հասցված վնասը կազմել է 1,485,809,280 ՀՀ դրամ, իսկ 2018 թվականին՝ 210 նյութ, որով շրջակա միջավայրին հասցված վնասը կազմել է 841,962,420 ՀՀ դրամ (Աղյուսակ 7):*

<i>Աղյուսակ 7</i>			
<i>Հ/Հ</i>	<i>Ժամանակահատվածը</i>	<i>Իրավապահ մարմիններին ուղարկված</i>	
		<i>Նյութերի քանակը</i>	<i>Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը (ՀՀ դրամ)</i>
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>
<i>1</i>	<i>2018 թվական</i>	<i>210</i>	<i>841,962,420</i>
<i>2</i>	<i>2019 թվական</i>	<i>820</i>	<i>1,485,809,280</i>
ԸՆԴԱՄԵՆԸ		1030	2,327,771,700

❖ *Տեսչական մարմնի և իրավապահ մարմինների համատեղ աշխատանքների արդյունքում բուսական աշխարհի պահպանության ոլորտում իրականացված վերահսկողական աշխատանքների շրջանակներում 2019 թվականի ընթացքում հայտնաբերվել և արձանագրվել է 16,818 հատ հատված ծառ և 3,191 խմ փայտանյութի ապօրինի տեղափոխման դեպք, իսկ 2018 թվականի ընթացքում՝ 12,821 հատ հատված ծառ և 892 խմ փայտանյութի ապօրինի տեղափոխման դեպք: 2019 թվականի ապօրինի ծառահատումների թիվը 31,2%-ով ավել է 2018 թվականի համեմատությամբ, իսկ փայտանյութի ապօրինի տեղափոխման արձանագրված դեպքերի համեմատականը աճել է 257,7 % -ով:*

❖ *2019 թվականին արձանագրվել է հրդեհի 7 դեպք, որի հետևանքով այրվել/ջերմահարվել է թվով 3940 ծառ, խոզան և թփեր, իսկ շրջակա միջավայրին հասցված վնասը կազմել 274,014,500 ՀՀ դրամ, 2018 թվականին՝*

4 դեպք, որի հետևանքով այրվել/ջերմահարվել է 1102 ծառ, իսկ շրջակա միջավայրին հասցված վնասը կազմել 33,748,500 ՀՀ դրամ:

❖ Տեսչական մարմնի և իրավապահ մարմինների համատեղ աշխատանքների արդյունքում 2019 թվականին կենդանական աշխարհի պահպանության ոլորտում արձանագրվել են Կարմիր գրքում գրանցված 1 բեզուարյան այծի, 11 կաքավի, 32 լորի, 2 արտույտի, 5 սև փարփարի, 1 աղվեսի, 1 քարակզաքիսի, 1 բադի, 1 սև կեռնեխի (մոժահավի), 1 այծյամի, 2 նապաստակի և 1 փափաստանային ճուռակի ապօրինի որսի դեպքեր: Առգրավվել է 4779,1 կգ սիգ, 132,2 կգ ապխտած սիգ, 19,3 կգ կարաս և կողակ, 223 հատ կարմրախայտ, 1,7 կգ խեցգետին, 6,3 կգ ձկնկիթ, 157 հատ ձկնագողության պարագա և 1 հատ հրացան:

❖ Պետական բյուջե 2019 թվականի ընթացքում մուտքագրվել է 512,349,241 ՀՀ դրամ գումար, իսկ 2018 թվականին՝ 172,623,380 ՀՀ դրամ: Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

❖ Տեսչական մարմնի կողմից 2019 թվականին Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ուղարկվել 367 որոշում 32,717,360 ՀՀ դրամի բռնագանձման պահանջով:

Ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծություն

❖ Բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունն իրականացվել է Տեսչական մարմնի կողմից 2018-2019 թվականների ընթացքում իրականացված վերահսկողական աշխատանքների ամփոփ ցուցանիշների արդյունքներով՝ համաձայն որոնց որպես առավել ռիսկային ուղղություններ թիրախավորվել են՝

✚ Բուսական աշխարհի օգտագործման և պահպանության վերահսկողության

- Անտառհատման ենթարկված տարածքներում էկոլոգիական վիճակի բացասական փոփոխությունները երկարաժամկետ բնույթ են կրում: Սոցիալտնտեսական տարբեր խնդիրների և փայտանյութի բարձր պահանջարկի հետևանքով անտառհատումները դեռևս գերազանցում են անտառի բնական վերականգնման ծավալները: Դրան նպաստում են փայտանյութի մատչելիությունը, էներգակիրների գների բարձրացումը, բնակչության սոցիալապես անապահով խավերի ցածր վճարունակությունը: Ապօրինի անտառհատումների արդյունքում ինտենսիվ բնույթ են կրում անտառի կազմի անցանկալի փոփոխությունները՝ անտառի նոսրացում, տնտեսապես բարձրարժեք կաղնույն և հաճարենույն փոխարինում է ցածրարժեք բոխին, անտառի ստորին գոտու տեսակների (այդ թվում՝ Կարմիր գրքում գրանցված) անհետացմանը: Վերջին տարիներին անտառային զանգվածների հատված տեղամասերում և դրանց հարող տարածքներում նկատվում է հողմատապալ կամ ձնետապալ տարածքների ընդարձակում, հողատարման, ձորակառաջացման, սողանքների, էրոզիոն-սելավային պրոցեսների ակտիվացում, աղբյուրների չորացում, փոշու ամպերի գոյացում և այլ երևույթներ, որոնք մեծ վնաս են հասցնում համայնքներին և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին: Որպես անտառային էկոհամակարգերի որակական

հատկանիշների փոփոխման հետևանք կարող են դիտվել վնասատուների զանգվածային համաճարակները: Ավելացել են անտառային հրդեհների ծավալները, որոնց դեմ պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացմանը խոչընդոտում են բարդ ռելիեֆը, անտառային ճանապարհային ցանցի անմխիթար վիճակը, հրդեհների մարման տեխնիկական սարքավորումների բացակայությունը և այլն: Առկա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է հատատեղերի շահագործումը, թափուկի դուրսբերումը կատարվի անտառտնտեսության կողմից և ցանկացած տիպի փայտանյութի տրամադրումն իրականացվի միայն պահեստից, ինչպես նաև վաճառված և տեղափոխվող փայտանյութի վերահսկողությունն իրականացվի առցանց:

Վերոգրյալ ուղղությունում առկա իրավիճակը բարելավելու նպատակով անհրաժեշտ է կատարել համապատասխան նորմատիվ իրավական դաշտի փոփոխություններ, գործող ընթացակարգերի հստակեցումներ, ինչպես նաև ծառահառումների արդյունքում շրջակա միջավայրին պատճառված վնասի չափաքանակների բարձրացում:

Մթնոլորտային օդի պահպանության վերահսկողության

- Առավել բարձր ռիսկային են համարվում ցեմենտի, գաջի արտադրությամբ, հանքարդյունաբերությամբ, գունավոր մետաղների վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունները: Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների բարձր կոնցենտրացիաների պատճառը պայմանավորված է տնտեսավարող սուբյեկտներին տրված թույլտվության չափաքանակների արտանետումների գերազանցմամբ՝ հատկապես անօրգանական փոշու, ծծմբային անհիդրիդի, ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդների, ծանր մետաղների, ցիանաջրածնի և այլ վնասակար նյութերի արտանետումներով:

Հիմնականում խնդիրները պայմանավորված են սահմանային թույլատրելի արտանետումների նախագծով նախատեսված արտադրողականության

ծավալների գերազանցման պատճառով, որոշ տնտեսվարողներ աշխատում են առանց հեռացող գազերի մաքրման համակարգի՝ հատկապես գունավոր մետաղների վերամշակմամբ զբաղվողները չեն ապահովում մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մաքրման համար բնապահպան կառույցների և սարքավորումների սարքինությունը, անընդմեջ և արդյունավետ աշխատանքը: Առանց մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների սահմանված նորմատիվների գործունեություն իրականացնելը բերում է մթնոլորտային օդում վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունների բարձրացմանը, մթնոլորտային օդի աղտոտվածությանը:

Ամբողջովին չի իրականացվում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի չափագրական աշխատանքները: Անալիտիկ լաբորատոր և չափագրական հետազոտությունների ոչ լիարժեք իրականացումը հանգեցնում է ռիսկերի բարձրացմանը:

Տեսչական մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից արտանետումների մակարդակների, սահմանային թույլատրելի նորմատիվների պահանջների ու չափման կարգերի պահպանման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել, քանի որ Տեսչական մարմնի հաշվեկշռում գտնվող սարքավորումները հին են և դեռևս Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության օրոք չի չափաբերվել Ստանդարտների ազգային ինստիտուտի ֆինանսական միջոցների սղության պատճառով:

Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է առաջարկ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2410-Ն «Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների

իրականացման կարգը հաստատելու մասին» որոշման կարգում փոփոխություն կատարելու մասին:

Վերոգրյալ ռիսկերի նվազեցման նպատակով՝ անհրաժեշտ է ձևավորել Հայաստանի Հանրապետությունում գործող տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության բնապահպանական պատասխանատվության մշակույթ, բարձրացնել իրազեկվածությունը մինչ գործունեությունը սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից հաշվառվելու՝ բնապահպանական հարկերը ՀՀ պետական բյուջե վճարելու, ինչպես նաև, կախված նախագծային հզորություններից, արտանետման անհրաժեշտ թույլտվություն ստանալու նպատակով:

✚ *Ջրերի օգտագործման և պահպանության*

- Ջրային ռեսուրսների պահպանությունը ինչքան կարևոր, այնքան էլ բարդ խնդիր է: Կարևորությունը նրանում է, որ ջուրը օգտագործվում է տնտեսության բոլոր ճյուղերում և սպառման ծավալները տարեցտարի աճում են: Սպառման ծավալների հետ աճում են նաև բնապահպանական ռիսկերը:

Առավել բարձր ռիսկային են համարվում Արարատյան դաշտի արտեզյան ջրավազանից և ՀՀ տարածքում ձկնատնտեսական նշանակության մակերևույթային ջրային ռեսուրսներից ջրառ իրականացնող, ինչպես նաև արտադրական կեղտաջրերը առանց մաքրման դեպի մակերևույթային ջրեր հեռացնողները: Արարատյան դաշտում բարձր ռիսկային են համարվում ձկնաբուծության, ոռոգման և խմելու, կոմունալ-կենցաղային նպատակներով ստորգետնյա ջրատար հորիզոնից ջրառ իրականացնողները: Այս պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել ջրօգտագործման հաշվառման (ջրաչափերի տեղադրման) և ստացած ջրօգտագործման թույլտվության բոլոր պայմանների կատարման պահանջները, քանի որ ջրառի $1,1 \text{ մ}^3/\text{մ}^3$ հաշվարկված ծավալներից ավել ($1,7 \text{ մ}^3/\text{մ}^3$) արդեն իսկ ջրօգտագործման թույլտվություններով տրված է:

Կարևոր է նաև ՀՀ տարածքում մակերևույթային ջրային ռեսուրսներից ջրառ իրականացնողների կողմից, հատկապես ՓՀԷԿ-երի շահագործման դեպքում գետերի էկոլոգիական թողքերի պահպանման և ձկնապաշտպան կառույցների ու սարքավորումների առկայության խնդիրները: Գետերի բնականոն հունը ծանծաղում է և խողովակաշարով այն տեղափոխվում է ՓՀԷԿ-երի շահագործման համար, արդյունքում խաթարվում է գետի տվյալ հատվածների էկոլոգիական հավասարակշռությունը:

Հատկապես բարձր ռիսկային ջրօգտագործողներ են համարվում նաև Սևանա լիճ և լճի ջրահավաք ավազան կեղտաջրեր հեռացնող տնտեսավարողները, ինչպես նաև «Վիոլիա ջուր» ՓԲ և ՋՕ ընկերությունները:

Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության խնդիրները լուծելիս խիստ կարևոր է իրականացնել կեղտաջրերի համապատասխան մաքրում: Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր մաքրման կայանները կատարում են միայն հեռացվող ջրերի մեխանիկական մաքրում, բացակայում են կենսաբանական և ֆիզիկաքիմիական մաքրման կայանները:

Վերոգրյալ ռիսկերի նվազեցման նպատակով՝ անհրաժեշտ է ձևավորել Հայաստանի Հանրապետությունում գործող տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության բնապահպանական պատասխանատվության մշակույթ, բարձրացնել իրազեկվածությունը մինչ գործունեությունը սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից հաշվառվելու՝ բնապահպանական հարկերը և բնօգտագործման վճարները ՀՀ պետական բյուջե վճարելու, ինչպես նաև, կախված նախագծային հզորություններից, ջրօգտագործման անհրաժեշտ թույլտվություն ստանալու համար:

Հողերի օգտագործման և պահպանության

- Առավել բարձր ռիսկերը պայմանավորված են հողերի ոչ ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործմամբ, հողի վերին՝ բերրի շերտի ապօրինի տեղափոխմամբ, հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի օգտագործման կարգի խախտմամբ, հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, կրկնակի աղակալումից, կարծրացումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական նյութերով աղտոտումից, սողանքներից և հողի վիճակը վաթարացնող այլ ազդեցություններից չպահպանմամբ:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնապահպանության և ընդերքի ոլորտների օրենսդրության ոչ լիարժեք տիրապետման, կիրառման և պահպանման հետևանքով, տրվում են հողաշինության և շինարարության թույլատվություններ առանց հողաշինական ծրագրերի համաձայնեցման, արդյունքում թերի է իրականացվում հողի բերրի շերտի պահպանման և տեղափոխման հետագա հսկողությունը:

Վերոգրյալ ռիսկերի նվազեցման նպատակով՝ անհրաժեշտ է ձևավորել Հայաստանի Հանրապետությունում գործող տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության բնապահպանական պատասխանատվության մշակույթ, բարձրացնել իրազեկվածությունը մինչ գործունեությունը սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից հաշվառվելու համար:

🚧 Վտանգավոր նյութերի և թափոնների գործածության

- Առավել բարձր ռիսկերը պայմանավորված են արտադրական և սպառման թափոնները չթուլատրված տեղերում տեղադրմամբ, վտանգավոր թափոնների անձնագրերի բացակայությամբ, թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի բացակայությամբ, թափոնների գույքագրումը, սկզբնական և ընդհանուր հաշվառման գրքերի վարման բացակայությամբ, վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման,

պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիաների բացակայությամբ: Խիստ բարձր են հողերի աղտոտման ռիսկերը:

Ընդերքօգտագործող ընկերությունները չեն իրականացնում գործունեություն թափոնների նախագծին համապատասխան, չեն պահպանվում հետագա ռեկուլտիվացիայի պայմանները, արդյունքում առաջանում է հողերի անհարկի աղտոտման և դեգրադացման բարձ ռիսկ:

Վտանգավոր նյութերի, մասնավորապես՝ կայուն օրգանական աղտոտիչների, պեստիցիդների պահման, օգտագործման, ոչնչացման պայմանների սահմանված կարգը խախտելը բարձրացնում է մարդու առողջությանը և շրջակա միջավայրին վնաս պատճառելու ռիսկերը: Վերջինիս կանոնակարգման նպատակով անհրաժեշտ է կառուցել միջազգային չափանիշներին համապատասխան նոր աղբավայրեր, դրանց տեղադրման, ոչնչացման և վնասազերծման համար սահմանել համապատասխան կարգ:

Հարկավոր է ներդնել նոր տեխնոլոգիաներ և սարքավորումներ, որոնք թույլ կտան վնասազերծել Հայաստանի Հանրապետության տարածքում առկա, ներկայումս ոչնչացման չենթարկվող վտանգավոր թափոնները (սնդիկային լամպեր, յուղեր և այլն):

Հայաստանի Հանրապետությունում աղբահանության ռազմավարական ծրագրերի ներդրումից և «Քիմիական նյութերի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո կանխատեսվում է վտանգավոր նյութերով շրջակա միջավայրի աղտոտման նվազեցում:

Վերոգրյալ ռիսկերի նվազեցման նպատակով՝ անհրաժեշտ է ձևավորել Հայաստանի Հանրապետությունում գործող տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության բնապահպանական պատասխանատվության մշակույթ, բարձրացնել իրազեկվածությունը մինչ գործունեությունը սահմանված

կարգով լիազոր մարմնի կողմից հաշվառվելու, ինչպես նաև բնապահպանական հարկերը ՀՀ պետական բյուջե վճարելու համար:

✚ Վիճակագրական հաշվետվություններ

- Առավել բարձր ռիսկերը պայմանավորված են ՀՀ հարկային օրենսգրքի 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնելու պահից, այն է՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1291-Ն որոշմամբ, ՀՀ-ում գործող տնտեսավարող սուբյեկտները բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկները եռամսյակային կտրվածքով ներկայացնում են Պետական եկամուտների կոմիտե՝ միասնական հարկային հաշվարկի էլեկտրոնային համակարգով: Նույն որոշման հավելվածի 5-րդ կետով՝ «Վճարողը լրացնում է միասնական հարկային հաշվարկի հավելվածը (արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար, ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները տեղադրելու և (կամ) պահելու համար բնապահպանական հարկի և (կամ) բնօգտագործման վճարի), որը պետք է ներկայացնի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ հաստատման»: Վերջինս չի իրականացվում, քանի որ Տեսչական մարմինը՝ որպես լիազոր մարմին, անմիջական հասանելիություն չունի միասնական հարկային հաշվարկի էլեկտրոնային համակարգին: Արդյունքում 2019 թվականին արձանագրվել է ՀՀ-ում գործող տնտեսավարող սուբյեկտների բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկների չներկայացման դեպքերի աճ, ինչպես նաև Տեսչական մարմինը չունի հնարավորություն լիարժեք իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ հաշվետվությունների թերի կամ աղավաղումներով ներկայացման առնչությամբ: Վերոգրյալ հաշվարկների վերաբերյալ տեղեկատվությունը Պետական

եկամուտների կոմիտեի կողմից Տեսչական մարմնին տրամադրվում է էլեկտրոնային փոստով՝ համակարգից Excel ձևաչափով ներբեռնած տարբերակով, ինչը առաջացնում է մի շարք խոչընդոտներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված և Տեսչական մարմնին վերապահված գործառույթների լիարժեք, օպերատիվ և արդյունավետ իրականացման առնչությամբ: Վերոգրյալ խնդիրը լուծելու նպատակով՝ անհրաժեշտ է համապատասխան ծրագրային գործիքներով էլեկտրոնային համակարգի ստեղծում և Տեսչական մարմնում ներդրում:

✚ *Ընդերքօգտագործման և պահպանության*

- Առավել բարձր ռիսկերն արձանագրվել են Արաքս գետի ափամերձ հատվածում շահագործվող ավազի և Արարատյան դաշտի ավազակոպճային հանքավայրերում: Երկիր մոլորակի պտույտով պայմանավորված՝ գետերը հյուսիսային կիսագնդում քանդում և քայքայում են իրենց աջ ափը, իսկ հարավային կիսագնդում՝ ձախը: Արաքս գետը պատմության ընթացքում և իրականության մեջ հայտնի է հաճախակի հուն փոխող գետ, ինչի հետևանքով գոյանում են հնահունային լճեր, որոնք էլ մեծամասամբ օգտագործվում են որպես ձկնաբուծարաններ: Վերջիններս օգտվում են Արարատյան դաշտի արտեզյան ավազանի ջրերից, խորքային հորիզոններից դուրս են բերում մեծ քանակությամբ ջուր, խախտում տարբեր հորիզոններում պարփակված ջրերի հանքայնացման աստիճանը, ինչն իր հերթին հանգեցնում է հողերի աղակալման, գյուղատնտեսական շրջանառությունից դուրս մնալուն՝ արդյունքում ընկնում է արտեզյան ավազանի կողային ճնշումը:

Արաքսի ափամերձ հատվածում գործող ընդերքօգտագործող կազմակերպություններ մաքուր ավազ ստանալու նպատակով՝ հաճախ արդյունահանումն իրականացնում են գետի հունից (դինամիկ պաշարներ)՝ ծանր տեխնիկայի միջոցով: Հաշվի առնելով, որ ափերը (դարավանդները)

հիմնականում կազմված են չորրորդականի (Q) դարաշրջանի ավազներից և շատ փուխր ապարներ են, ապա չեն դիմանում ծանր տեխնիկայի գործունեությանը: Արդյունքում ափերը փլուզվում են, Արաքսի հունը արհեստականորեն շեղելով դեպի ձախ ափը, այսինքն՝ Հայաստան:

Առաջարկվում է 17 կմ ափամերձ հատվածի վրա իրականացնել գաբիոններով (Արմավիրի մարզում) և գաբիոններով ու տրավերտինի ոչ պիտանի մեծաբեկոր կտորներով (Արարատի մարզում) ափապաշտպան միջոցառումներ, միաժամանակ չդադարեցնելով և չկասեցնելով գետավազի արդյունահանումը՝ հաշվի առնելով շուկայում ավազի մեծ պահանջարկը:

Արարատյան դաշտում գործող ավազակոպճային հանքավայրերի և տարբեր համայնքներում ավազի արդյունահանման հետևանքով գոյացած ահռելի ջրափոսերի պատճառով գյուղատնտեսական շրջանառությունից դուրս են եկել որոշ մակերեսներով հողեր (ունեն հաշվառման կարիք), որոնք կարող են մայրաիա հիվանդության տարածման պատճառ դառնալ:

Բոլոր ոչ մետաղական հանածոների հանքավայրերը գոյացնում են լցակույտեր, որոնք պատկանում են ոչ վտանգավոր (վտանգավորության V դասի) թափոններին, շատ դեպքերում դրանք տեղադրվում են ոչ թե աշխատանքային նախագծով նախատեսված տեղամասում, այլ շրջակա հողատարածքների կամ արոտների (անգամ հանքշահագործման տարածքներից դուրս) վրա:

Հանքավայրերում պարբերաբար չեն իրականացվում երկրաբանական, մարկշեյդերական փաստագրման աշխատանքներ, արդյունքում հնարավոր չի լինում տեղանքում ճշգրիտ գնահատել ռելիեֆային իրավիճակը տարբեր ժամանակաշրջանների համար: Ընդերքօգտագործող ընկերությունների մեծ մասը չունեն համապատասխան մասնագետներ, իսկ աշխատանքներն իրականացնում են բազմաթիվ խախտումներով՝ կապված մասնագետների

սղության կամ մասնագետներին պատշաճ վարձատրելու հնարավորություն չունենալու հետ:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնապահպանության և ընդերքի ոլորտների օրենսդրության ոչ լիարժեք տիրապետման, կիրառման և պահպանման հետևանքով, համայնքներին պատկանող տարածքներում չի իրականացվում հողերի, ինչպես նաև օգտակար հանածոների լիարժեք պահպանություն, արդյունքում առաջանում է հողերի ոչ նպատակային օգտագործում և բնությանը հասցվում է անդառնալի վնաս:

Ընդերքօգտագործող ընկերությունները համապատասխան թույլտվություն ստանալուց հետո իրենց գործունեությունն իրականացնում են առանց հողի նպատակային նշանակությունը փոխելու՝ կապված Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից արհեստական խոչընդոտների պատճառով:

Ոչ մետաղական օգտակար հանածոներ ընդերքօգտագործող որոշ ընկերություններ չեն իրականացնում ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու վերաբերյալ սահմանված կարգով պահանջները՝ մասնագետների բացակայության հետևանքով:

Ընդերքօգտագործման ոլորտում շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցման հաշվարկի դրույքաչափերը բավական ցածր են՝ հասցված վնասի վերականգնման համար:

Առաջարկվում է փոշու արտանետումները նվազագույնին հասցնելու համար՝ չորային սեզոնին բոլոր արտադրական հարթակները ենթարկվեն ինտենսիվ

ջրցանման, իրականացվեն սորուն նյութեր տեղափոխող մեքենաների ծածկում անջրաթափանց ծածկոցներով և մեքենաների անիվների վլացում:

Առաջարկվում է տուֆի լցակույտերը (թափոնները) օգտագործել քաղաքների ճանապարհների սալարկման և կերամզիտի հետ խառնելով տուֆի փոշին, ստանալ գեղագրական սալիկներ: Բազալտի լցակույտերը կարելի է օգտագործել արհեստական մանրաթելեր և արտադրության մեջ դիմացկուն տարբեր դետալներ ստանալու համար (Քարակերտի նախկին արհեստական մանրաթելերի գործարանի բազալտի վրա): Պեոլիտի լցակույտերով պատրաստել ձայնա և ջերմամեկուսիչ սալեր, ջերմամեկուսիչ կենցաղային իրեր: Օբսիդիանը փոշի չառաջացնող գեղագրական քար է և Հայաստանում համարյա չի օգտագործվում: Կարելի է խթանել ճշգրիտ չմաշվող բժշկական գործիքների և գեղարվեստական իրերի արտադրությունը: Յեոլիտային տուֆերից կարելի է կառուցել հակամանրէային անասնագոմեր, իսկ ցեոլիտն օգտագործել անասնակերի արտադրության մեջ:

2. Խորհրդատվական գործունեությունը, տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ տրվող հարցերի վերհանումը և այն իրավական ակտերը, որոնք տալիս են դրանց հստակ պատասխանները.

❖ *Տեսչական մարմինն առաջնորդվել է 2019 թվականի մայիսի 7-ին Տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատված «Տեսչական մարմնի 2019 թվականի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների փարեկան ծրագրով», նախաձեռնել, կազմակերպել և իրականացրել ծրագրային կետերով պլանավորված միջոցառումները:*

❖ *Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ընթացքում փնտրեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացման և հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով կազմակերպվել է հանդիպումներ.*

- Տեսչական մարմնի ղեկավարի հրավերով 2019 թվականի հունիսի 7-ին Երևան քաղաքում հանդիպում Հայաստանի Հանրապետությունում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունք կրող 22 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարների հետ, իրազեկվածության մակարդակի բարձրացման և հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով, որի ընթացքում կարևորվել է Տեսչական մարմնի և տնտեսավարող սուբյեկտների միջև փոխգործակցությունը, մասնավորապես վերահսկողության ոլորտում հնարավոր խախտումները կանխարգելելու և հանրային շահերը պաշտպանելու նպատակով: Ընդգծվել է, որ Տեսչական մարմինը մշտապես բաց է տնտեսավարող սուբյեկտների գործունեության ընթացքում առաջացած հարցերի, խոչընդոտների քննարկման և իր լիազորությունների շրջանակում դրանց լուծումների աջակցման համար, միաժամանակ տնտեսավարող սուբյեկտներին հորդորվել է իրենց գործունեությունն իրականացնել ՀՀ օրենսդրության շրջանակներում: Տնտեսավարողների հետ քննարկվել են թափոնների կառավարման, ջրօգտագործման, սահմանային թույլատրելի արտանետումների, տնտեսավարող սուբյեկտների դեմ դիմում-բողոքների, վարչական վարույթների, դատական գործերի, արդյունահանման աշխատանքներ չիրականացնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների, մշտադիտարկումների արդյունքների հրապարակման, օրենսդրական բացերի, լեռնային աշխատանքների նախագծերում փոփոխությունների իրականացման ընթացքում առաջացող հարցերի մասին և այլն:

Տեսչական մարմնի ղեկավարի հրավերով 2019 թվականի դեկտեմբերի 6-ին Երևան քաղաքում հանդիպում Հայաստանի Հանրապետությունում շինարարական գործունեություն իրականացնող 18 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարների և ներկայացուցիչների հետ, իրազեկվածության մակարդակի բարձրացման և հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով: Հանդիպման ընթացքում քննարկվել են շինարարության ընթացքում բնապահպանական օրենսդրության պահանջների պահպանման՝ շինարարական հրապարակների պարսպապատման, շինարարության օբյեկտները համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկելու, ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, սորուն նյութերը և շինարարական աղբը անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով տեղափոխելու, շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրցանելու, շինհրապարակներից դուրս եկող

ավտոմեքենաների անվադողերը լվանալու, շինարարական հրապարակի սահմաններից դուրս կեղտաջրերի թափանցումը բացառելու, շինարարական աղբը դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղիով տեղափոխման վերաբերյալ հարցեր, ինչպես նաև հողի բերրի շերտի օգտագործման, հաշվառման, պահպանման կարգերը:

Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ներկայացվել է պատրաստակամություն օրենքի շրջանակներում տնտեսավարողներին օժանդակելու և իր լիազորության սահմաններում օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես գալու վերաբերյալ:

- Հայաստանի Հանրապետության 10 մարզում 2019 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ մոտ 80 տնտեսավարող սուբյեկտների, 17 հասարակական կազմակերպությունների, 3 որսորդական միավորումների, 10 կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ների, 15 ջրօգտագործող ընկերությունների ղեկավարների ու ներկայացուցիչների հետ:

❖ Հանդիպումների ընթացքում ներկայացվել են.

- Անտառային տնտեսություն վարող անձանց և անտառ օգտագործողների պարտականությունները, անտառների սանիտարական վիճակի պահպանության, անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի բնակիչներին անվճար, ոչ արտադրական նպատակով թափուկ փայտանյութի տրամադրման, ինչպես նաև անտառավերականգնման և անտառապատման աշխատանքների, անտառօգտագործման ընթացքում բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների այդ թվում՝ ՀՀ կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանության, անտառային հողերի բերրի շերտի պահպանության կանոնների պահանջների վերաբերյալ պարզաբանումներ:

- Վայրի կենդանիների որսի և ձկնորսության կանոնների, բնության հատուկ պահպանվող տարածքների համար սահմանված ռեժիմների, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների պահպանության, օգտագործման և վերարտադրության օրենսդրական կարգավորումների վերաբերյալ պարզաբանումներ:

- Ջրօգտագործման նոր թույլտվության ստացման, ջրօգտագործման թույլտվությունների փաստաթղթերի ձեռքբերման, ջրահաշվիչների տեղադրման, կապարակնքման, հաշվառման, անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների, արտանետման թույլտվությունների ստացման, օբյեկտների շինարարության ընթացքում արտանետումները

կանխարգելող միջոցառումների, հողի բերրի շերտի տեղափոխման աշխատանքների կատարման, վտանգավոր նյութերի և արտադրական ու սպառման թափոնների գործածության՝ առաջացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման, շրջակա միջավայրում դրանց տեղադրման, վտանգավոր թափոնների անձնագրավորման իրավական կարգավորումների վերաբերյալ պարզաբանումներ:

- Ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության բնագավառում երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքների, դրանց շահագործման համար սահմանված ընդերքօգտագործման պահանջներ, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրության վարման լիարժեքության, օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառման իրականացման տեղեկատվության ներկայացման, ընդերքօգտագործման ընթացքում բնապահպանական թափոնների կառավարման իրավական կարգավորումների վերաբերյալ պարզաբանումներ:

- Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական եռամսյակային հաշվարկի, վարչական վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետների և լրացման կարգերի վերաբերյալ պարզաբանումներ:

- ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 1343-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1423-Ն, ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» N 1110-Ն և 2003 թվականի ապրիլի 3-ի «Ջրերի հաշվառման այլընտրանքային կարգը հաստատելու մասին» N 499-Ն և այլ որոշումներում կատարված լրացումների ու փոփոխությունների վերաբերյալ պարզաբանումներ:

- Մասնակիցներին տրամադրվել են տեղեկատվական-խորհրդատվական նյութեր և բուկլետներ:

❖ *Տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ փրված հարցերը և իրավական ակտերը*

Հարց - Հողերի օգտագործման և պահպանության ոլորտում՝ հողի բերրի շերտի տեղափոխման աշխատանքների կատարում:

Կարգավորում - Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1396-Ն որոշում:

Հարց - Զրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ոլորտում՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալը, ջրօգտագործման թույլտվությունների փաստաթղթերի ձեռքբերման, ջրահաշվիչների տեղադրման, կապարակնքման, հաշվառման և այլ ձևաթղթերի վերաբերյալ:

Կարգավորում - Հայաստանի Հանրապետության Զրային օրենսգիրք և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի թիվ 218-Ն «Զրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը, ջրադրյուրի, հորատանցքի անձնագրերի և հիդրոերկրաբանական հորատանքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին» որոշում:

Հարց - Մթնոլորտային օդի պահպանության ոլորտում՝ անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների, արտանետման թույլտվություններ ստացում և օբյեկտների շինարարության ընթացքում արտանետումները կանխարգելող միջոցառումները:

Կարգավորում - «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք և Հայաստանի Հանրապետության կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1673-Ն որոշում:

Հարց - Վտանգավոր նյութերի և արտադրական ու սպառման թափոնների գործածության՝ առաջացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման,

օգտահանման (թափոնի երկրորդային օգտագործում), հեռացման, վնասագերծման, շրջակա միջավայրում դրանց տեղադրման վերաբերյալ:

Կարգավորում - «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի «Թափոնների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» N 47-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի «Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման» թիվ 2291-Ն որոշումներ:

Հարց - Կենդանական և բուսական աշխարհների օգտագործման և պահպանության ոլորտում՝ բնապահպանական իրավախախտումների, իրականացվող վարչական վարույթների, դրանցով հաշվարկվող բնությանը պատճառված վնասների հաշվարկի և կիրառվող վարչական տուգանքների, անվճար թափուկ փայտանյութի տրամադրման, դրա տնօրինման վերաբերյալ

Կարգավորում - ՀՀ անտառային, Վարչական իրավախախտումների մասին, ՀՀ քրեական օրենսգրքերով, Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհի պատճառված վնասի հատուցման սակագների հաշվարկի մասին, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին, Կենդանական աշխարհի մասին և Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքներով, ՀՀ բնապահպանության և գյուղատնտեսության նախարարների 2011թ. նոյեմբերի 29-ի «Ոչ արտադրական նպատակներով թափուկ վառելափայտի մթերման և բացթողման» N 253-Ա և N 226-Ա հրամաններ:

Հարց - Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական եռամսյակային հաշվարկի, վարչական վիճակագրական հաշվետվությունների լրացման կարգերի վերաբերյալ:


Կարգավորում - Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգը սահմանելու մասին» N 1291-Ն որոշում:

3. Կանխարգելիչ գործողությունները և այն ռիսկերը, որոնց վերհանմանն են ուղղված, և որոնք կանխել են դրանք.

❖ **Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ընթացքում պատրաստվել և հրապարակվել է Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ թվով 104 մամուլի հաղորդագրություն, տեղեկանք, պարզաբանում, որոնք ստացել են 676 փարածում: Հանրությանը ներկայացվել են Տեսչական մարմնի կողմից**

հայտնաբերված իրավախախտումների և դրանց առնչությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ շաբաթական հաշվետվություններ: Տնտեսավարող սուբյեկտներին, ՋԼՄ-երին և բնապահպանական հասարակական կազմակերպությունների կողմից Տեսչական մարմնին ուղղված բանավոր հարցումներին փրվել է ավելի քան 80 բանավոր և/կամ գրավոր պարզաբանումներ, մասնագետների կողմից փրամադրվել է խորհրդարկություններ՝ ապահովելով Տեսչական մարմնի գործունեության ամրացման և հրապարակայնության սկզբունքը:

- 2019 թվականին գործարկվել է Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջը (www.ecoinspect.am), որը պարբերաբար թարմացվում է համապատասխան տեղեկատվությամբ, իսկ հղումները տեղադրվում են Facebook սոցիալական ցանցի Տեսչական մարմնի պաշտոնական էջում, այն ունի շուրջ 2480 հետևորդ, որից 2017թ.՝ 379 օգտատեր, 2018թ.՝ 1031 օգտատեր, 2019թ.՝ 1070 օգտատեր (Գծապատկեր 8):




- Տեսչական մարմնի կողմից իրականացվել է ամենօրյա մոնիտորինգ ավելի քան 200 լրատվամիջոցի հրապարակումների առնչությամբ, այդ թվում՝ տպագիր մամուլ, հեռուստահաղորդումներ, էլեկտրոնային կայքեր, ինչպես նաև Facebook սոցիալական ցանցի օգտատերերի գրառումներ, որի արդյունքում կատարվել է Տեսչական մարմնի գործունեությանն առնչվող շուրջ 3282 հրապարակումների

ուսումնասիրություն, ամփոփում, վերլուծություն, օրվա մամուլի տեսության պատրաստում, համակարգված արխիվի ստեղծում:

- Տեսչական մարմնի ղեկավարը և աշխատակիցները մասնակցել են 41 հեռուստա և ռադիո հաղորդման, տվել հարցազրույցներ և ճեպազրույցներ՝ Տեսչական մարմնի գործունեությանն առնչվող, հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ:

- Տեսչական մարմնի գործունեությանը հաճախակի անդրադարձ կատարած լրատվամիջոցներ՝



- Բնապահպանական հասարակական կազմակերպությունների, քաղաքացիների, բնապահպանների, սոցիալական ցանցերի օգտատերերի կողմից Տեսչական մարմնի թեժ գծի հեռախոսահամարին ստացվել է 119 ահազանգ, որից 38-ը վերաբերել է բուսական, 30-ը՝ կենդանական աշխարհի, 51-ը շրջակա միջավայրի վրա վնասակար այլ ազդեցություններին: Բարձրացված բոլոր հարցերին տրվել է սահմանված ընթացք և լուծումներ, տրամադրվել է խորհրդատվություն, իրականացվել է արագ արձագանքում:

Տեսչական մարմնի 2018-2019թթ. ընթացքում Թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերի գծապատկեր՝



4. Ստուգումներ, դրանց քանակը, բնութագրերը, տևողությունը և անցկացված ստուգումների արդյունքները.

❖ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 1511-Ն և 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 1562-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1125-Ն որոշումը:

❖ Տեսչական մարմնի խորհրդի կողմից 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1-Լ և թիվ 2-Լ որոշումներով հաստատվել է 2020 թվականի ստուգումների և գործունեության տարեկան ծրագրերը:

❖ Տեսչական մարմնի 2018 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվել էր թվով 250 տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացնել

ստուգում: Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրվել է ստուգում իրականացնելու մասին թվով 116 հանձնարարագիր, որից իրականացվել է թվով 101 ստուգում, 16-ը տեղափոխվել է 2019 թվական, իսկ թվով 15 հանձնարարագիր ճանաչվել է անվավեր: Փաստացի իրականացված և ավարտված ստուգումների քանակը կազմել է 85, որից 48-ը ստուգումների տարեկան ծրագրով, 37-ը՝ ՀՀ վարչապետի հանձնարարականների, ՀՀ պետական այլ մարմիններից ստացված գրությունների և դիմում-բողոքների հիմքով:

❖ Տեսչական մարմինը 2019 թվականի համար պլանավորված ստուգումների տարեկան ծրագիր չի ունեցել, սակայն փաստացի իրականացրել է թվով 160 ստուգում՝ ՀՀ վարչապետի հանձնարարականների, ՀՀ պետական այլ մարմիններից ստացված գրությունների, դիմում-բողոքների և այլ հիմքերով: Մասնավորապես.

- Թվով 134 ստուգում 30.12.2019թ. դրությամբ ավարտվել է (ընդհանուր ստուգումների մեջ ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների քանակը կազմում է 78.1%):
- 2018 թվականից տեղափոխված թվով 16 ստուգումից ավարտվել է 12-ը, 1-ը՝ կասեցվել է, իսկ 3 հանձնարարագիր ճանաչվել անվավեր,
- 2019 թվականի ստուգումներից 17-ը ընթացքի մեջ են, 1-ը՝ կասեցված է, իսկ 4 հանձնարարագիր ճանաչվել է անվավեր:

Թվով 160 ստուգումները իրականացվել են հետևյալ հիմքերով՝

- Վարչապետի հանձնարարականով - 22 ստուգում, որից 18-ը ավարտված են, 2-ը ընթացքի մեջ է, իսկ 2 հանձնարարագիր ճանաչվել է անվավեր:
- 2018 թվականի ստուգումների տարեկան ծրագրով – 9 ստուգում (ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների քանակը

կազմում է 5%), որից 6-ը ավարտված է, 1-ը կասեցված, իսկ 2 հանձնարարագիր ճանաչվել է անվավեր:

- Իրավապահ մարմիններից ստացված գրությունների հիմքով - 26 ստուգում, որից 23-ը ավարտված է, 3-ը՝ ընթացքի մեջ:
- ՊԵԿ-ի գրությունների հիման վրա - 6 ստուգում, որոնք ավարտված են:
- Քաղաքացիներից ստացված բողոք-դիմումների հիմքով - 33 ստուգում, որից 29-ը ավարտված է, 3-ը՝ ընթացքի մեջ, իսկ 1-ը՝ կասեցված:
- Նախարարություններից, տեղական ինքնակառավարման մարմիններից և այլ պետական մարմիններից ստացված գրությունների հիմքով - 56 ստուգում, որից 45-ը ավարտված է, 8-ը՝ ընթացքի մեջ, 3 հանձնարարագիր ճանաչվել է անվավեր:
- Նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) ժամկետի լրացման հիմքով - 8 ստուգում, որից 7-ը ավարտված են, 1-ը ընթացքի մեջ է:

Թվով 134 ավարտված ստուգումների արդյունքում կազմվել է 106 ստուգման ակտ և 28 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ փեղեկանք:

Թվով 134 ստուգումներով կայացվել է 91 վարչական տուգանքի որոշում՝ 16 830 000 ՀՀ դրամ վարչական տուգանքի չափով, որից պետական բյուջե մուտքագրվել է 11 530 000 ՀՀ դրամը:

Թվով 46 ստուգման արդյունքներով հաշվարկվել է՝ 1 297 369 824 ՀՀ դրամ շրջակա միջավայրին հասցված վնաս, որից պետական բյուջե մուտքագրվել է 420 138 828 ՀՀ դրամ:

Թվով 63 ստուգման արդյունքներով հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ փնտեսավարողներին տրվել են հանձնարարականներ, որոնցից լիովին կատարվել է 35-ը, մասնակի՝ 10-ը, մնացածը ժամկետի մեջ է:

❖ *Տեսչական մարմինը 2020 թվականի սրուգումների փարեկան ծրագրով պլանավորել է իրականացնել թվով 90 սրուգում, որից՝ 63-ը բարձր ռիսկայնությամբ, 23-ը միջին ռիսկայնության, 4-ը ցածր ռիսկայնությամբ փնտեսավարող սուբյեկտների մոտ:*

5. Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները, որոնք վերհանել են տեսչական մարմինները, ինչպես նաև դրանց պատճառները և տարածվածությունը.

❖ *Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացված սրուգումների արդյունքում վերհանվել են փնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները՝ հետևյալ վերահսկողական ուղղություններով (Աղյուսակ 9):*

<i>Աղյուսակ 9</i>				
Սրուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
Հ/Հ	Ուղղությունները	Իրավախախտումների թիվը 2019 թվական	Վարչական փուզանքի ենթարկված անձանց թվաքանակը 2019 թվական	Նշանակված վարչական փուզանքի չափը 2019 թվական (ՀՀ դրամ)
1	2	4	6	8
1	Բուսական աշխարհի օգտագործում և պահպանության	7	0	0
2	Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանության	0	0	0
3	Մթնոլորտային օդի պահպանության	20	16	2,000,000
4	Զրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	58	52	12,600,000
5	Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ	8	5	430,000
6	Հողերի օգտագործում և պահպանության	15	4	450,000
7	Ընդերքօգտագործում և պահպանություն	8	8	750,000
8	Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում	1	1	100,000
9	Պետական փորձաքննություն	5	5	500,000
ԸՆԴԱՄԵՆԸ		122	91	16,830,000

- 1) ՀՀ «Զրային օրենսգրքի» 21-րդ, 27-րդ, 37-րդ, 99-րդ, 103-րդ և 104-րդ հոդվածներ,
- 2) ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ, 8-րդ, 36-րդ և 110-րդ հոդվածներ,

- 3) «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 15-րդ, 21-րդ և 41-րդ հոդվածներ,
- 4) ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ, 32-րդ, 46-րդ, 59-րդ և 65-րդ հոդվածներ:

6. Օրենսդրության մեջ փոփոխությունների կատարման առաջարկները՝ օրենսդրական բացերը լրացնելու, ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով.

❖ Օրենսդրական բացերը լրացնելու, Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու և փնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով՝ առաջարկվում է իրականացնել փոփոխություններ և լրացումներ հետևյալ իրավական ակտերում.

✚ «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/

ա) 3-րդ հոդվածի 2-րդ մասում «Այլ տեսակի ձկներ» բառը հանել, հաշվի առնելով, որ գետերում, լճերում, արգելված միջոցներով և հատկապես զանգվածային ոչնչացման եղանակներով որս իրականացնելու դեպքում ոչնչացվում են բազմաթիվ տարբեր տարիքի և չափսի ձկներ և մանրաձկներ, ինչի հետևանքով իրականում պատճառված վնասը շատ ավելի մեծ է լինում, քան կիրառվածով հաշվարկելու դեպքում,

բ) Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությունը խմբագրել հետևյալ կերպ՝ «Հողմատապալ կամ ցցաչոր ծառերի ապօրինի հատման դեպքում վնասի հատուցման սակագինը հաշվարկվում է սույն կետի «ա» և «բ» ենթակետերում բերված սակագների հիսուն տոկոսի չափով», հակառակ

դեպքում վերոնշյալ ծառերի ապօրինի հատման դեպքում ակնկալվող եկամուտը ավելի շատ է լինում, քան հաշվարկվող վնասի հատուցման չափը,

գ) Օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասը առաջարկվում է խմբագրել հետևյալ կերպ՝ «Ապօրինի ծառահատումների փաստը հատված ծառերի (կոճղերի) տեսքով հայտնաբերելու դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում է (անտառներում) սույն օրենքի 2-րդ գլխով սահմանված սակագների եռապատիկի չափով, իսկ մյուս դեպքերում 2-րդ գլխով սահմանված հաշվարկման կարգով: Կատարված փոփոխությունը կրում է խմբագրական բնույթ:

✚ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում կատարել լրացում, որով հնարավորություն կընձեռվի վարչական պատասխանատվության ենթարկել ոչ միայն ապօրինի որս կատարողին, այլ նաև ապօրինի որսը գնողին և վերավաճառողին:

✚ «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսել համապատասխան հոդվածներ, որոնցով հնարավորություն կընձեռնվի առանց ստուգման հանձնարարագրի կամ հրամանի՝ մուտք գործել տնտեսավարող սուբյեկտի գործունեության տարածք, իրականացնելու արտաքին դիտարկում և/կամ գնում: Օրենքի 26-րդ հոդվածի (ուսումնասիրությունների միջոցով վերահսկողության իրականացման կարգը)՝ 3-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ՝ «նախազգուշացումից հետո սահմանված ժամկետում ստուգվող սուբյեկտի կողմից խախտման հետևանքները չվերացնելը և (կամ) դրա վերաբերյալ պատշաճ ձևով չտեղեկացնելը հիմք են հանդիսանում նոր ստուգումների իրականացման, վարչական վարույթի հարուցման և վարչական պատասխանատվության ենթարկելու համար»:

- ✚ ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 89-րդ հոդվածից առաջարկվում է «եռապատիկը» բառը փոխարինել «տասնապատիկը» բառով: Կատարված փոփոխությունը կարգավորելու է կատարած խախտման և պատասխանատվության համարժեքությունը:
- ✚ ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1110-Ն որոշման մեջ առաջարկվել է կատարել փոփոխություններ և այն հաստատվել է: Կատարված փոփոխությունները կնպաստի շրջակա միջավայրին հասցված վնասի հատուցման հաշվարկների առավել փաստացի և ճշգրտված չափերով իրականացմանը:
- ✚ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. հունվարի 25-ի «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» N 92-Ն որոշման մեջ կատարվել են խմբագրական փոփոխություններ, ինչպես նաև հստակեցվել և խստացվել է գյուղատնտեսական հողերի վրա բացասական ազդեցության հետևանքով առաջացող վնասի հաշվարկումը:
- ✚ ՀՀ անտառային օրենսգրքի ա) 47-րդ հոդվածի 2-րդ մասի «Անտառների և անտառային հողերի օգտագործման իրավունքը ժամկետից շուտ կարող է դադարեցնել սեփականատերը», երբ ա) ենթակետի «անտառօգտագործման գոտում բնակվող մարդկանց կյանքին կամ առողջությանը» բառակապակցությունից հետո ավելացնել «կամ շրջակա միջավայրին» բառակապակցությունը,

բ) 58-րդ հոդվածի 2-րդ մասում «պետական ծառայությունը» բառակապակցությունը փոխարինել «տվյալ բնագավառում լիազորված

բնապահպանական վերահսկողություն իրականացնող մարմին» բառերով:

Կատարված փոփոխությունը կրում է խմբագրական բնույթ:

գ) 60-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել նոր կետ՝ հետևյալ բովանդակությամբ, «Ապօրինի ձեռք բերված անտառանյութի տեղափոխելը», հաշվի առնելով, որ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 65-րդ հոդվածով վերը նշված խախտման համար սահմանված է վարչական պատասխանատվություն:

7. Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ, բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումների մասին.

❖ Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտերի դեմ 2019 թվականին բերվել է թվով 48 բողոք, որից 21-ը՝ Տեսչական մարմին բողոքարկված (14-ով՝ որոշումը թողնվել է անփոփոխ, 7-ով՝ բողոքը բավարարվել է), 27-ը՝ դատարան (Աղյուսակ 10):

Հ/Հ	Հայցվոր (Բողոքաբեր)	Հայցապահանջի (Հայցի առարկայի) նկարագիր	Վարչական տուգանքի չափը	Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը
Տեսչական մարմին բողոքարկված				
1.	«Մուրադ Սար» ՍՊԸ	2019թ. ապրիլի 11-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/15-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	80.000 Որոշումը թողնվել է անփոփոխ	0
2.	«Այաս» արտադրական կոոպերատիվ	2019թ. ապրիլի 18-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/36-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	80.000 Բողոքը բավարարվել է	0
3.	«Ժամանակակից վիրաբուժության կլինիկա» ՍՊԸ	2019թ. ապրիլի 19-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/47-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	80.000 Որոշումը թողնվել է անփոփոխ	0
4.	«Սելենա» ԲԲԸ	2019թ. ապրիլի 18-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/38-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	80.000 Որոշումը թողնվել է անփոփոխ	0
5.	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ	2019թ. ապրիլի 22-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/68-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	80.000 Բողոքը բավարարվել է	0
6.	«Պատ գրուպ» ՍՊԸ	2019թ. ապրիլի 30-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/68-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	80.000 Որոշումը թողնվել է անփոփոխ	0

7.	«Հախվերոյան շինմոնտաժ» ԲԲԸ	2019թ. մայիսի 31-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/34-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	80.000 Որոշումը թողնվել է անփոփոխ	0
8.	Դավիթ Ղուամաշյան	2019թ. հունիսի 4-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԼՏ/54-Ա և «Վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու մասին» որոշումները անվավեր ճանաչելու պահանջի մասին	50.000 Որոշումը թողնվել է անփոփոխ	265.320
9.	«Հասմեխ» ՍՊԸ	2019թ. ապրիլի 23-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/74-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	80.000 Որոշումը թողնվել է անփոփոխ	0
10.	Մանվել Փոքրիկյան	2019թ. մայիսի 8-ի «Վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու մասին» թիվ ԿՎ-20,21/12 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	0	38.000 Բողոքը բավարարվել է
11.	Մուշեղ Փոքրիկյան	2019թ. մայիսի 7-ի «Վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու մասին» թիվ ԿՎ-27/08 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	0	68.000 Բողոքը բավարարվել է
12.	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	2018 թվականի օգոստոսի 28-ի թիվ 30-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	Բողոքը բավարարվել է	0
13.	«ՄԷՍ սթոուն» ՍՊԸ	Տեսչական մարմնի 2019թ. հունիսի 4-ի «Գործունեությունը կասեցնելու մասին» որոշումը ուժը կորցրած ճանաչելու պահանջի մասին	Որոշումը թողնվել է անփոփոխ	0
14.	«Վակուֆլո» ՍՊԸ	Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 2019թ. հունիսի 12-ի «Գործունեությունը կասեցնելու մասին» թիվ 04/-02-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու պահանջի մասին	Բողոքը բավարարվել է	0
15.	«Կոկ սիստեմ» ՍՊԸ	Տեսչական մարմնի 2019 թվականի հուլիսի 03-ի ստուգման ակտը անվավեր ճանաչելու պահանջի մասին	Բողոքը բավարարվել է	0

16.	«Արագածոտն» ԶՕԸ	տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 2019 թվականի հունիսի 11-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» N 04/-46-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	300,000 Որոշումը թողնվել է անփոփոխ	0
17.	Վրեժ Սարգսյան	Տեսչական մարմնի Կոտայքի տարածքային բաժնի 2019 թվականի հուլիսի 08-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» N 11/13-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	50.000 Որոշումը թողնվել է անփոփոխ	42.500
18.	«Ավտոկայարաններ» ՓԲԸ	Տեսչական մարմնի Երևանի տարածքային բաժնի 2019թ. ապրիլի 19-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/46-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	80.000 Որոշումը թողնվել է անփոփոխ	0
19.	«Հայր և որդի Բունիաթյաններ» ՓԲԸ	2019 թվականի օգոստոսի 21-ի թիվ 02/02 ստուգման ակտը անվավեր ճանաչելու պահանջի մասին	Որոշումը թողնվել է անփոփոխ	0
20.	«Գինդ» ՍՊԸ	Տեսչական մարմնի Երևանի տարածքային 2019թ. հունիսի 20-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/74-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	50,000 Որոշումը թողնվել է անփոփոխ	0
21.	«ԱՆԻ» ԲԲԸ	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետի 23.08.2019 թվականի թիվ 06/29-Ա որոշումը, նույն բաժնի ավագ պետական տեսուչի 23.08.2019 թվականի թիվ Հ-01 խախտումները վերացնելու մասին հանձնարարականը, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի 25.10.2019 թվականի թիվ 051 որոշումը վերացնելու պահանջների մասին:	100,000 Որոշումը թողնվել է անփոփոխ	0
Դապարան բողոքարկված				

22.	«ՎՈւ ԴԻՆ» ՍՊԸ	28.11.2019թ. ՄՎՏ/10-Ա վարչական տուգանք նշանակելու մասին որոշումն վերացնելու պահանջի մասին:	200.000	0
23.	«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	Որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու պարտավորեցնելու մասին 29.10.2019թ. թիվ 28-Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ	0	0
24.	Արտակ Գառնիկ Մաթևոսյան	25.09.2019թ. թիվ 03/55_Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ	150.000	0
25.	Մանուկ Ադիբեկ Հայրապետյան	25.09.2019թ. թիվ 03/56_Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ	150.000	0
26.	«ԱՆԻ» ԲԲԸ	23.08.2019թ. թիվ 06/29-Ա որոշումը, 23.08.2019թ. թիվ Հ-01 խախտումները վերացնելու մասին հանձնարարականը և 25.10.2019թ. թիվ 051 որոշումը վերացնելու պ/մ	100.000	0
27.	Փայլակ Հայկարամ Խաչատրյան	16.09.2019թ. թիվ 07/63-Վ որոշումն անվավեր ճանաչելու պ/մ	50.000	0
28.	Թաթուլ Վահրամ Շահինյան	10.09.2019թ. թիվ 08/156/19-ՎՏ որոշումը վերացնելու պ/մ	150.000	130.500
29.	Դեկորպրոֆ ՍՊԸ	27.08.2019թ. թիվ ԵՏ/84-Ա որոշումը վերացնելու պ/մ	50000	0
30.	Հայկ Մկրտիչ Եսայան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի՝ 05.09.19թ. թիվ 04/111.1/2726-19 գրություն-մերժումը, որպես վարչական ակտ, 30.04.2019թ. թիվ ԿՎ/01-Ա և թիվ ԿՎ-6/01 որոշումներն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք Պատասխանողին Հայցվորից առգրավված՝ «ԽԺ-58 ՄԱ» N Ս-07257 12 մողելի զենքը վերադարձնելուն պարտավորեցնելու պ/մ	250.000	18.000

31.	Դավիթ Գեղամ Ղումաշյան	04.06.2019թ. թիվ ԼՏ/54-Ա որոշումն ու դրա հիմքով 04.06.2019թ. թիվ 17.9.05/226 «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով բուսական աշխարհին պատճառված 265320 վնասի հատուցման մասին» պահանջը վերացնելու և 10.07.2019թ. թիվ 28 որոշումը վերացնելու պ/մ	50.000	0
32.	«Վակուֆլո» ՍՊԸ	12.08.2019թ. թիվ 43 ստուգման ակտն անվավեր ճանաչելու և, որպես հետևանք, 26.08.2019թ. թիվ 04/-60-Ա որոշումը վերացնելու պ/մ	200.000	0
33.	«ՄԷՍ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ	10.07.2019թ. թիվ 027 բողոքը մերժելու մասին որոշումը և, որպես հետևանք, 29.05.2019թ. կայացված թիվ 129 ակտերն անվավեր ճանաչելու պ/մ	0	808.900
34.	«ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ	02.08.2019թ. թիվ 033 և 034 որոշումներն անվավեր ճանաչելու պ/մ	200.000	45.606.520
35.	Լուսինե Մեջլումյան	Վարչական տուգանք նշանակելու մասին թիվ Մվտ 19-Ա որոշումը վերացնելու պ/մ		378.807
36.	Արմեն Հախվերդյան «Ժամանակակից վիրաբուժական կլինիկա» ՍՊԸ-ի տնօրեն	19.04.2019թ. վարչական տուգանք նշանակելու մասին որոշումը, ինչպես նաև 03.06.2019թ. որոշումն անփոփոխ թողնելու մասին թիվ 012 որոշումն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պ/մ	80.000	0
37.	Վարդան Սիմոնյան	06.05.2019թ. թիվ ԿՎ/_02_Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ	250.000	
38.	Հմայակ Խաչատրյան	06.05.2019թ. թիվ ԿՎ/_03_Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ	250.000	34.000
39.	Գագիկ Բաղդասարյան	18.04.2019թ. թիվ ՄՎՏ 01-Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ	300.000	0
40.	«Էլ-կաս» ՍՊԸ	12.06.2019թ. թիվ 04/-01-Ա որոշումն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պ/մ	0	0

41.	Ժորա Զհանգիրյան	16.04.2019թ. թիվ ԵՏ/22-Ա որոշումը վերացնելու պ/մ	50.000	0
42.	Արմենուհի Գևորգյան	11.04.2019թ.-ի թիվ ԵՏ/14-Ա որոշումը վերացնելու պ/մ	80.000	0
43.	Արմինե Գևորգյան	06.05.2019թ. թիվ ԿՎ-18/02 որոշումն անվավեր ճանաչելու պ/մ	70.000	0
44.	«Արմոյլ» ՓԲԸ	17.12.2018թ. թիվ 020 որոշումն ամբողջությամբ վերացնելու, Ընկերությանը որոշակի գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պ/մ	0	0
45.	Արմեն Հմայակյան	17.09.2018 թվականի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Գեղարքունիքի տարածքային բաժնի պետի թիվ 07/39-Վ որոշումն անվավեր ճանաչելու պ/մ	100.000	0
46.	Ամբիկ Գևորգյան «Մխչյան Ֆիշ» ՍՊԸ-ի տնօրեն	28.02.2019թ. թիվ ՄՎՏ 33-Ա որոշումն ամբողջությամբ վերացնելու պ/մ	200.000	585.169.920
47.	Արմեն Մարգարյան «Մերի Ֆիշ» ՍՊԸ-ի տնօրեն	28.02.2019թ. թիվ ՄՎՏ 34-Ա որոշումն ամբողջությամբ վերացնելու պ/մ	200.000	64.722.240
48.	«Արագած Պեոլիտ» ԲԲԸ	14.02.2019թ. թիվ 131 ստուգման ակտն ամբողջությամբ վերացնելու պ/մ	150.000	669.973